

ԱՂՕԹԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ

ՎԵՐԱՆՈՐԳՈՒԹԻՒՆ

Այսօր շատ մարդիկ օրը քանի մը վայրկեան հապնեպ կերպով կ'աղօթեն եւ իրենց ըրածին անունը կը դնեն աղօթք: Ուրիշներ երբ խաչակնքեն, կը խորհին, որ անիկա աղօթքի պահը կը փոխարինէ: Տակաւին կան անոնք, որոնք երբ օրուան ընթացքին «Տէր Յիսուս» բառերը արտասանեն տունէն դուրս ելած ատեն կամ գործի գացած ժամանակ, կը կարծեն, որ իրենց ըրածը աղօթք է: Կան նաեւ մարդիկ, որոնք Սուրբ Պատարագի ներկայ ըլլալը աղօթք կը նկատեն: Այս բոլորը, սակայն աղօթքի աղբատագոյն երեսները կը ներկայացնեն, եւ շատ հեռու են ճշմարիտ աղօթք նկատուելէ: Ո՞վ չի գիտեր, որ մարդ կրնայ օրը քանի անգամ խաչակնքել եւ հարիւր անգամ Յիսուսը խաչել իր մեղքերով: Ո՞վ չի գիտեր, որ մարդ կրնայ օրը յիսուն անգամ «Տէր Յիսուս» բառերը կրկնել, առանց սակայն Յիսուսը իբրեւ Տէր ունենալու իր սրտին մէջ: Ո՞վ չի գիտեր, որ մարդ կրնայ Սուրբ Պատարագի գալ, եւ սակայն որեւէ հաղորդակցութիւն չունենալ Աստուծոյ պատարագուած գառնուկին հետ: Ուստի պէտք է վերանորոգենք աղօթական մեր կեանքը: Պէտք է խնդրենք Սուրբ Հոգիէն, որ մեզի հետ աղօթէ եւ մեզի աղօթել սորվեցնէ (Յդ. 20 Հո. 8-26 Փլ. 1-19): Երբ Սուրբ Հոգին ինք ըլլայ աղօթքի ժամանակ մեր առաջնորդն ու ուսուցիչը, այն ատեն աղօթքի ժամանակ պիտի չուզենք Տիրոջմէն, այլ՝ Տէրը պիտի ուզենք: Տիրոջ ձեռքին պիտի չնայինք, այլ՝ անոր սրտին: Տիրոջ պարգեւները պիտի չըլլան մեր հետաքրքրութեան նիւթը, այլ՝ անոր սէրն ու փառքութիւնը:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ



Իսկ, որո՞նք են Յաղթական եկեղեցոյ զաւակները: Բոլոր անոնք, որոնք հաւատքով ննջած են յաւիտեան, անոնք՝ որոնք իրենց հաւատքի վկայութիւնը տուած են ապրուած կեանքով, եւ այսօր ամենօրեայ մեղանչումէն զերծ՝ կը գտնուին Աստուծային դատաստանին առջեւ:

Ահաւասիկ հոգեհանգստեան արարողութեան հիմնական նպատակը, աղօթք առ Բարձեալն Աստուած, որպէսզի «արդարներուն վերապահուած օթեաններուն մէջ հանգչեցնէ մեր սիրեցեալ ննջեցեալներուն հոգիները»

Ուրեմն հոգեհանգստը մեր եկեղեցական կեանքին մէջ, եզակի այն պատեհութիւնն է, որ ո՛չ միայն առիթ կը ստեղծէ յիշելու մեր ննջեցեալները, ո՛չ միայն առիթ կ'ընծայէ ապրելու անոնց քաղը յիշատակը, այլեւ՝ յատկապէս մեզ կը մղէ աղօթք վերանաքելու ամենագութ Աստուծոյ՝ մեր ննջեցեալներու հոգիներու փրկութեան համար:

Հոգեհանգստեան արարողութիւնը մեզ կը միաձուլէ Յաղթական եկեղեցւոյ՝ հետ, Զրիստոսի թափուր գերեզմանէն ճառագայթող յոյսի եւ հաւատքի՝ յաւերժութեան լոյս ճանապարհին վրայ:



ԲՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՌԵՔՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՂ.119-105)

ԺԵ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 13 ՆՈՅՏԵՄԵՐ 2022

ԹԻՒ 46

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՆՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Ես. 25.9-26.7: Փլա. 1.1-11: Ղկ. 9.44-50

ԱԻՇՏԱՐԱՆ ԸՍՏ ԳՈՒԿԱՍՈՒ 9.44-50

Մինչ ժողովուրդը կը զարմանար իր կատարած գործերուն վրայ, Յիսուս աշակերտներուն դառնալով ըսաւ. *«Լաւ մտիկ ըրէ՛ք եւ մի՛ մոռնաք ասիկա: Մարդու Որդին պիտի մատնուի մարդոց ձեռքը»:* Սակայն աշակերտները չհասկցան խօսքին իմաստը, որովհետեւ Աստուած իրենցմէ ծածկած էր՝ որպէսզի չհասկնան: Միւս կողմէ ալ կը վախճային իրեն հարցնելու այս մասին:

Աշակերտները սկսան վիճաբանիլ, թէ իրենցմէ ո՞վ է մեծը: Յիսուս գիտնալով անոնց մտածումը, մանուկ մը առաւ եւ իր մօտ կանգնեցնելով ըսաւ. *«Ով, որ այս մանուկը ընդունի իմ անունովս՝ զիս ընդունած կ'ըլլայ, եւ ով որ զիս ընդունած է՝ ընդունած կ'ըլլայ զիս որկողը: Որովհետեւ, ով որ ձեր մէջ ամենէն փոքրիկն է՝ ան է մեծը»:*

Յովհաննէս ըսաւ. *«Վարդապետ, մէկը տեսանք՝ որ քու անունովդ դետեր կը հանէր եւ մենք արգիլեցինք իրեն, որովհետեւ քու հետետորդներէդ չէ»:*

Յիսուս ըսաւ. *«Արգելք մի՛ ըլլաք իրեն, որովհետեւ ան՝ որ հակառակ չէ՞ ձեզի կը նշանակէ, թէ ձեր կողմն է»:*

ՏԻՐՈՋ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ

Բարձրեալ է Յիսուս բայց բնաւ խոնարհը չ'անտեսեր: Հգօ՛ր է, բայց երբեք չի ոտնակոխեր սկարը: Մե՛ծ է, բայց չ'անտեսեր փոքրերը: Թագաւոր է, բայց չի նախատեր մեղքի ստրուկները: Անսխալական է, բայց չի դատապարտեր սխալածներս: Երանի՛ր ամենքս ալ նմանինք իրեն, եւ երբ մեծանաք դիրքով ու հանգամանքով, ասիկա պատճառ չըլլայ, որ չտեսնենք մեր նմանները, եւ չլսենք խեղճներուն ձայնը :

ԱՌԱԿ 7.2-5

Որդեա՛կ, պահէ՛ իմ պատուիրաններս եւ դուն պիտի ապրիս: Պահէ՛ թելադրութիւններս աչքիդ բիրին պէս: Չանոնք մատներուդ կապէ եւ սրտիդ տախտակին վրայ արձանագրէ: Ըսէ՛ իմաստութեան, որ քոյր դառնայ քեզի: Ծանօթացի՛ր գիտութեան, որպէսզի անոնք քեզ պահեն օտար եւ չար կնոջմէ, երբ ան իր խօսքերով կը փորձէ քեզ հրապուրել:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՍՐԲՈՑ ԱՌԱՔԵԼՈՑՆ՝ ԱՆԴՐԷԱՍԻ ԵՒ ՓԻԼԻՊՊՈՍԻ



Երկու սուրբերն էլ, որ Գալիլիոյ լիճին եզեր-
քը իր եղբորը՝ Պետրոսի հետ, կը կանչուի
Քրիստոսի կողմէ առաքելութեան:

Անդրէաս նախապէս եղած է Յով-
հաննէս Մկրտիչի աշակերտը եւ յսած
ըլլալով Յովհաննէսի վկայութիւնը Յի-
սուսի մասին նախքան Յիսուսէ կան-
չուիլը, արդէն անպաշտօն հետեւողը ե-
ղած է Յիսուսի եւ այդ պատճառով
կոչուած է՝ Նախակոչ առաքել:

Անդրէաս առաքել շատ քիչ կը յիշ-
ուի աւետարաններուն մէջ: Աւանդաբար
կ'ըսուի, թէ եղած է Սկիւթացիներուն
քաղաքի առաքելը եւ սակայն եկեղեցի
չէ հիմնած այնտեղ: Նաեւ քաղաքը կը
նկատուի Հիւսիսային Յունաստանի մէջ
եւ նահատակուած Բաթրաս քաղաքին
մէջ, բազմապատկութեան նշանին նման
խաչի մը վրայ, որով խաչի այդ ձեւը կը
կոչուի նաեւ Ս. Անդրէասի խաչ:

Փիլիպպոս Առաքել

Փիլիպպոս առաքել Բեթսահիդայէն
էր, Անդրէաս եւ Պետրոս առաքելներուն
քաղաքէն (Յհ. 1.44):

Յիսուս երբ կը կանչէ զինք առաքել-
ութեան, Փիլիպպոս առաքել առանց
ժամանակ կորսնցնելու կ'երթայ եւ
կ'աւետէ Նաթանայէլին, թէ գտած են
այն մարդը, որու մասին Օրէնքի
գիրքին մէջ գրուած է (Յհ. 1.45):

Փիլիպպոս առաքել երեք տարիներ
հետեւելէ ետք Քրիստոսի, միւս առաք-
ելներուն նման, կ'անցի առաքել-
ութեան եւ ըստ աւանդութեան կը
քարոզէ Փոքր Ասիոյ մէջ եւ կը նա-
հատակուի իսաչելութեամբ:

ՀԱՐՅՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ ԲԱՐՄԻՆ

ՏՕՆԵՐԸ Ե՞ՐԲ ՍԿԱՆ

Աւանդութիւնը կ'ըսէ, որ առաջին ե-
րեք դարերուն, սուրբերու նահատակու-
թեան թուականին, անոնց յիշատակը կը
կատարէին: Չորրորդ դարուն, մեր
Լուսաւորիչը՝ Գրիգոր տօնեց Հոփսի-
սիմեանց եւ Գայիանեանց տօնե-
քը, եւայլն: Հինգերորդ դարուն, Սուրբ Աս-
հակ Պարթեւ Հայրապետին գործակցու-
թեամբ, Սուրբ Մեսրոպ Մաշտոցը գրեց
տօնացոյցը մինչեւ իրենց օրերը, եւ
ինչպէս հին ձեռագիրներու տօնացոյց-
ներէն կ'երեւի, սուրբերուն յիշատակնե-
րը տնօրինած է ուստիքի եօթնեակներու
չորս օրերը: Ապա, եկեղեցւոյ տօնացոյցը
հետգիտէ հարստացաւ նահատակներով
եւ որբակեացներով, մինչեւ տասնհինգե-
րորդ դար, ինչպէս նաեւ տնօրինուեցաւ
«Ամենայն Սրբոց» հին թէ նոր, յայտնի
թէ անյայտ սուրբերու տօնը:

Հ ՈԳԵՒՈՐ ՊԱՏ ԳԱՍ

ՄԵՐ ԲԱՐՄԻՆԸ ՀԱՐԱՏԱԼՆ Է, ԻՍԿ ԱՏՈՒԾՈՅ ԲԱՐՄԻՆԸ՝ ՄԵՐ ՀԱՐԱՏՔԸ ԱՐԵՆՏՆԵԸ

«Աւելցուր մեր հաւատքը»: Ամէն
մարդ, որ ուզէ հաւատալ Աստուծոյ՝
կրնա՞յ: Մեր մտքին մէջ յստակ պէտք
է ըլլայ հետեւեալը.- Աստուծոյ
հաւատալը կամ չհաւատալը մեր
ձեռքն է: Մենք իրաւասութիւնը
ունինք մերժելու հաւատքը կամ
ընդգրկելու զանիկա: Մեծն Կիրեղ
կ'ըսէ. «Մեր իշխանութեան սահման-
ներուն մէջ կ'իյնայ Աստուծոյ վս-
տահիլն ու հաւատալը, բայց հա-
ւատքը մեր ներսիդին հաստատելն
ու զօրացնելը՝ Աստուծոյ գործն է»:
Ասիկա գիտնալէ ետք, ուել մարդ չի
կրնար արդարացում ունենալ
Աստուծոյ առջեւ, եթէ մերժէ հաւա-
տալ Քրիստոսի փրկագործութեան:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ Հ ՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ

Մենք պէտք չէ խնդրենք Աս-
տուծմէ, որ օգնէ մեզի, որ հաւատանք
իրեն, հաւատանք իր գոյութեան, իր
սիրոյն, իր փրկութեան, իր գթու-
թեան: Մենք Աստուծաշունչէն սոր-
ված ըլլալով՝ ինքնաբերաբար պէտք
է հաւատանք այս բոլորին: Մեր
խնդրելիքը Աստուծմէ պէտք է ըլլայ
այն՝ որ զօրացնէ մեր հաւատքը, որ
արդէն իսկ ունինք իրեն հանդէպ:

ԵՅԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒԶԵՍ...

ԵՐԲ ԱՏՈՒԾՈՅ ԵԿԵՂԵՅԻՆ ՄԱՐՆԻ ԿԸ ԽՈՐՀԻՍ, Կարդա՛ր ՍԿՂՄՈՍ 45

Միտքս գեղեցիկ մտածումներով
կ'եռայ, լեզուս արագագիր քարտու-
ղարի մը գրիչին պէս կը սահի՝ այս
տողերը ընծայելու համար թագաւո-
րին: Գեղեցկութեամբ գերազանց ես
բոլոր մարդոց մէջ: Շնորհք կը կաթի
շրթներդ: Իրաւամբ Աստուած քեզ
օրհներ է յախտեան: Կապէ՛ սուրը
մէջքիդ, ո՛վ դուն հօգօր, նշանակը քու
մեծ փառքիդ ու վայելչութեանդ: Լա-
րէ՛ յաջորդութեանդ աղեղը, հեծի՛ր
կառքդ՝ պաշտպանելու համար ճշ-
մարտութիւնը, հեզութիւնն ու արդա-
րութիւնը, եւ թող աջդ սքանչելի յաղ-
թանակներ ապահովէ: Սրուած նե-
տրդ, հօգօր թագաւոր, թշնամիներուդ
սիրտը թող մխուի, ժողովուրդները
նոքերուդ իյնան: Քու աթոռդ, ո՛վ
Աստուած, յախտեանկան է, թագա-
ւորական իշխանութիւնդ արդար իշ-
խանութիւն է: Արդարութիւնը կը սի-
րես եւ անիրաւութիւնը կ'ատես: Ահա,
թէ ինչու Աստուած, քու Աստուածդ,
ուրախութեան իւրով օծեց քեզ, բոլոր
թագաւորներէն վեր կարգելով:
Չմոռս, հալուէ եւ կասիա կը փութն
զգեստներդ, լարաւոր նուագարան-
ները քեզ կ'ուրախացնեն փողակրա-
գարդ պալատիդ մէջ:

Միշտ աղօթենք առանց վիատելու,
բանալով եւ կարդալով Մաղմուսագիրքը